

Ներածություն

Սույն վիճակագրական ժողովածուն ներառում է տվյալներ, որոնք ստացվել են 1998/1999, 2001 և 2002թթ.-ի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքներով և մշակվել են ըստ ընտրանքային համակցության (առանց ընդհանուր համակցության վրա տարածման): Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) երկրորդ անգամ է ամփոփ ներկայացնում տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի և սննդամթերքի սպառման բնութագրիչներն առանձին ժողովածուի տեսքով:

Ժողովածուն պարունակում է տեղեկատվություն բնակչության կենսամակարդակի վերաբերյալ, ներկայացնելով վերջինիս բնութագիրն ըստ եկամուտների և ծախսերի, հիմնական պարենային ապրանքների սպառման կառուցվածքի՝ կախված տնային տնտեսության նյութական ապահովվածության աստիճանից, անդամների թվաքանակից, երեխաների առկայությունից, աշխատող և գործազուրկ անդամների թվաքանակից և սոցիալ-տնտեսական այլ ցուցանիշներից: Եկամուտների վերաբերյալ տվյալների համեմատ, տնային տնտեսությունների ծախսերի ցուցանիշները համարվում են առավել վստահելի, քանի որ հարցվողները հիմնականում հակված են իրենց եկամուտները ավելի ցածր ներկայացնել կամ թաքցնել: Բնակչության առանձին խմբերի կենսամակարդակը դիտարկվում է ինչպես ըստ մեկ շնչի հաշվով հաշվարկված բարեկեցության ցուցանիշների, այնպես էլ ըստ դեցիլային (10%) խմբերի: Յուրաքանչյուր խմբի համար բերված են դրամական եկամուտների, սպառողական ծախսերի ու սննդամթերքի սպառման ցուցանիշները:

Հետազոտության իրականացման մեթոդաբանության համառոտ նկարագրությունը, բնակչության ընդհանուր կենսամակարդակը գնահատող եկամուտների և ծախսերի ցուցանիշների և առան-

Introduction

This statistical handbook presents the data from the households surveys conducted in 1998/1999, 2001 and 2002. These data were analyzed on the basis of the sample population (without extrapolation on the general population). For the second time in the last 10 years the National Statistical Service of RA (NSS RA) presents a summary on the indicators of income, expenditure and food consumption of households in one handbook.

The Handbook contains information on living standards of the population in terms of a structure of incomes, expenditures, and consumption of basic food products and its dependence on household's welfare level, number of members, number of children, number of employed and unemployed members and other socio-economic indicators. Indicators on household expenditures are more reliable, as compared to data on incomes, as respondents mainly tend to declare lower rate of incomes or hide them. The living standards of separate groups of population are presented by per capita welfare indicators, as well as by decile (10%) groups. Indicators on monetary incomes, consumer expenditures and food consumption are presented for each group.

An outline of the survey methodology, explanations of indicators and separate concepts of incomes and expenditures that evaluate the general living standards of the population are

ձին հասկացությունների բացատրությունները նույնպես տրված են այս հրատարակության մեջ:

Ժողովածուն բաղկացած է վեց մասից:

- **Առաջին մասում** ներկայացված է հետազոտության իրականացման մեթոդաբանության համառոտ նկարագիրը՝ ընտրանքային համամասնության ձևավորման մոտեցումները, տվյալների որակի գնահատման մեթոդաբանական մեկնաբանությունները, տնային տնտեսությունների ֆինանսական վիճակը բնութագրող հիմնական տերմինների և ցուցանիշների մեթոդաբանական պարզաբանումները:
- **Երկրորդ մասը** ներկայացնում է ընդհանուր տեղեկատվություն հետազոտությանը մասնակցած տնային տնտեսությունների ժողովրդագրական պատկերի մասին:
- **Երրորդ մասը** տվյալներ է տրամադրում տնային տնտեսությունների եկամուտների դինամիկայի վերաբերյալ՝ ըստ վերջիններիս աղբյուրների:
- **Չորրորդ մասը** պարունակում է տեղեկատվություն տնային տնտեսությունների ծախսերի դինամիկայի և կառուցվածքի վերաբերյալ:
- **Հինգերորդ մասը** ներկայացնում է տնային տնտեսությունների կողմից սննդամթերքի սպառման կառուցվածքի դինամիկան:
- **Վեցերորդ մասը** նման տեղեկատվություն է տալիս Երևան քաղաքի բնակչության մասին:

Ժողովածուն կազմել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տնային տնտեսությունների հետազոտության բաժինը: Հարցերի կամ պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 52-43-26:

Մույն վիճակագրական ժողովածուում ներկայացված տվյալների օգտագործման դեպքում պարտադիր է նշել դրանց աղբյուրը:

ՀՀ Ազգային վիճակագրական

also given in this publication.

The handbook consists of six sections.

- **Section 1** outlines the survey methodology –the sample design, explanations of data quality evaluation, explanations of the main indicators and terms describing the financial state of households.
- **Section 2** provides general information on demographic snapshot of households surveyed.
- **Section 3** provides information on the dynamics of household incomes by their sources.
- **Section 4** provides information on the dynamics and structure of household expenditures.
- **Section 5** presents the dynamics and structure of food consumption by households.
- **Section 6** provides similar information on the population in Yerevan.

The handbook was prepared by the Household Surveys Division of RA National Statistical Service. Please contact us for questions and clarifications by calling at 52-43-26.

It is mandatory to provide a reference to the source document when using data represented in this statistical handbook for other reports.

The RA National Statistical Service (RA NSS) expresses its gratitude to all households, which have participated in the survey with pleasure and which sincerely provided the required information, as well as to the interviewers and supervisors who conducted the survey, and the whole

ծառայությունն իր խորին երախտագիտությունն է հայտնում այն բոլոր տնային տնտեսություններին, որոնք սիրով մասնակցել են հետազոտությանն ու անկեղծորեն տրամադրել են անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև հետազոտությունն իրականացրած հարցազրուցավարներին, խմբերի ղեկավարներին և ՀՀ ԱՎԾ-ի այն բոլոր աշխատակիցներին, որոնք աջակցել են հետազոտության կազմակերպման ու իրականացման աշխատանքներին:

ՀՀ ԱՎԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում նաև **Եվրոպական հանճնաժողովի պարենային ապահովության ծրագրին**՝ հետազոտության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աջակցության տրամադրման համար և **ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանն ի դեմս PADCO inc.** ԱՄՆ խորհրդատվական ընկերության կողմից իրականացվող Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրին՝ հետազոտության արդյունքների մշակման և հրատարակման գործում տրամադրված աջակցության համար:

staff of NSS RA who supported the organization of the survey.

The RA NSS expresses its gratitude also to the **Food Security Program of the European Commission** for financial assistance provided to conduct the survey and to the **USAID funded Armenia Social Transition Program implemented by US PADCO Inc. consulting company** for the technical assistance provided for the processing and publication of the survey results.